## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ Թ. 1

Գիւղատնտեսական մասին Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի վասն Մարտ ամսոյ 1906 ամի:

| Ծառայողներ, բանուորներ և արհեստ. | Թիւ ծառայ. | Քանի օր է բանել: | Վճարուել է | |
|---|---|---|---|---|
| | | | Ր. | Կ. |
| Կառավարիչ | 1 | 31 | 150 | 00 |
| Վերակացու | 2 | 62 | 22 | 50 |
| Կառապան | 3 | 93 | 32 | — |
| Խոհարար | 1 | 31 | 7 | — |
| Այգի մշակութեան և գինեգործութեան բաժ. | 171 | 1167 | 484 | 45 |
| Պտղաքեր ծառերի և բանջարների | 11 | 167 | 181 | 73 |
| Անասունի | 24 | 343 | 163 | 13 |
| Առւոյտի և այլ բոյսերի վարի | 3 | 93 | 17 | — |
| Խոտահարքի և սերմերի | 5 | 51 | 28 | 83 |
| Բանջարանոցի | — | — | 22 | 25 |
| Ձիապահութեան | 4 | 124 | 24 | 70 |
| Տաւարապահութեան | 15 | 465 | 100 | 50 |
| Երամապահութեան | — | — | 15 | — |
| Ջրառուների նորոգութեան | 2 | 21 | 18 | 30 |
| Մի խառատի | 1 | 31 | 8 | — |
| Գոյք առնուած է՝ 3 դուլթաններ, 3 սրսկիչ, 3 ծծումբ փչող մեքենաներ, մի բամբակ ցանելու, 70 բահեր, 35 թոխիններ, 36 փոցխեր, 3 պատուաստի դանակներ, 5 այգու մկրատներ և գրքեր | — | — | 441 | 63 |
| Տնտեսութեան վերաբերեալ ծախք | — | — | 22 | 41 |
| Շինութեանց նորոգութեան | — | — | 2 | 70 |
| Ծախսուած է ընդամէն | 243 | 2679 | 1742 | 13 |

| Ագարակի անասունները | Բաշխի կայ | Ծնած կամ գնած | Սատկած կամ ծախած | Ընդամէնը |
|---|---|---|---|---|
| **Ձիեր** | | | | |
| Կառքի և սայլի լծելու ձիեր | 11 | — | — | 11 |
| Հեծնելու ձիեր | 10 | — | — | 10 |
| Մատակներ | 5 | — | — | 5 |
| Քուռակ որձ 1 տար. | 1 | — | — | 1 |
| Աւանակ | 3 | — | — | 3 |
| **Տաւար** | | | | |
| Գոմէշ լծկան | 25 | — | — | 25 |
| Գոմշակով կթի և ցամաքած | 36 | — | — | 36 |
| Գոմշաձագ 1 տար. | 23 | 4 | — | 27 |
| » 2 տար. | 14 | — | — | 14 |
| Եզներ լծկան | 24 | — | — | 24 |
| Կովեր կթի և ցամաքած | 19 | — | 1 | 18 |
| Հորթեր 1 տար. | 16 | — | — | 16 |
| » 2 տար. | 2 | — | — | 2 |
| 1906 թ. ծնունդ մինչև մարտ | 6 | 5 | 1 | 10 |
| | 195 | 9 | 2 | 202 |

| Կաթնատնտեսութիւն | ղ. | փ. | Ընդամէնը ղ. | Ընդամէնը փ. |
|---|---|---|---|---|
| **Մուտք** | | | | |
| 19 կովեր տուել են կաթ | 29 | 31 | | |
| 18 գոմշակովեր | 45 | 20 | 75 | 11 |
| **Ելք** | | | | |
| Պատրաստուել է 3 պ. 4¼ փ. կարագ, որի մի մասի համար գնացել է կաթ | 48 | 12 | | |
| Տրուել է վեհարանին, միաբանութեան, հիւրատան և հիւանդներին կաթ | 14 | 19 | | |
| » մածուն | 12 | 20 | 75 | 11 |

| Գինեգործութիւն | վեդ. | շիշ. | Ընդամէն | |
|---|---|---|---|---|
| | | | վ. | շ. |
| **Մուտք** | | | | |
| Գինի մնում էր առ 1 Մարտի | 1813 | — | — | — |
| **Ելք** | | | | |
| Բաց է թողուած միաբանութեան, հիւրատան և հիւանդների | 71 | 11 | — | — |
| Գինները լցնելու և տականք | 7 | — | — | — |
| Ծախուած է | 19 | 5 | 98 | — |

## Նկատողութիւններ

*Մարտ ամսին գլխաւոր աշխատութիւնը կենտրոնացած է եղել Ղալի, Լուսարարի և Օղուզի այգիների վրայ։*

*Մարտ 6-ից սկսել ենք բանալ վազերը, 10-ից կտրելը, 15-ից փորելը, Ղալի և միւս այգիները ահագին աշխատութիւն են ուզում քանի տարիներից ի վեր անխնամ մնացած լինելով. չայիրը, զարազաճի ծառի մացառները և ուրիշ ծառեր խեղդել են շատ տեղ վազերը։*

*Փորողները ստանում են 40—45 կ. օրավարձ, կտրողները 50—60 կ. արկատ կամ չայիր հաւաքողները 20—35 կ.։*

*Մարտ 10-ից սկսեցինք բուլվարում և ս. Գայիանէի վանքի հիւսիսակողմը ընկած հողում 600-ից աւել միգդալենի ծառեր տնկել, հիւրատան դիմացը 3000 բարդենիք և 1000 զամբիւղի ուռենի դնել։ Ղալի այգում տնկանոց է պատրաստուել 20,000 մատների, այգու պակաս տեղերը լցնելու։*

*Գութանները վարել են մօտ 10 դես. տեղ. առւոյտի և այլ բոյսերի համար։*

Ջրել են անտառը, հացաբոյսերը, ծառատունկը, նորոգել անտառի ջրատուները ամբողջապէս։

Ամսի սկզբին տեղափոխել ենք գինիները։

37 կթաններից ստացած կաթի քանակը ամսուայ ընթացքում եղել է 75 պ. կամ ամեն մինն տուել է միջին թուով 2 պուտ կաթ կամ օրը $2^2/_5$ փնտ., որը պիտի վերագրել կերի պակասութեան և գոմանոցների անյարմարութեան։

Եղանակը մինչև Մարտ 12, գրեթէ ամեն օր, $1^0 - 5^0$ R. ցուրտ էր, միջին ջերմութիւնը $+6^0$ ամենաբարձր ջերմութիւնը եղել է $15^0$ ամսի 17-ին։

Անձրևներ եկել են 3-ին և 23-ին թեթև։

Ամպամած օրեր ունեցել ենք 3 օր, քամիներ 15-ին, 26, 27-ին։

Նախիրը հանդն են թողել 2-ին։

## ՏԵՂԵԿԱԳԻՐ Թ. 2.

Գիւղատնտեսական մասին Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, վասն Ապրիլ ամսոյ 1906 ամի:

| Ծառայողներ, բանուորներ և արհեստ. | Թիւ ծառայ | Քանի օր է բանել | Վճարուած է Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Կառավարիչ | 1 | 30 | 150 | — |
| Վերակացու | 2 | 60 | 22 | 50 |
| Կառապան | 3 | 90 | 32 | — |
| Խոհարար | 1 | 30 | 7 | — |
| Վարի մշակութեան և գինեգործ. | 164 | 1475 | 585 | 84 |
| Պտղաբեր ծառերի | 6 | 89 | 32 | 40 |
| Անտառի և փայտ կտրելու | 14 | 235 | 76 | 80 |
| Հացաբոյսերի մշակութեան | 9 | 270 | 65 | 60 |
| Փործնական ագարակի | 4 | 14 | 10 | 60 |
| Բանջարանոցի | — | — | — | 95 |
| Ձիապահութեան | 3 | 90 | 18 | — |
| Տաւարապահութեան | 11 | 330 | 64 | — |
| Շերամապահութեան | — | — | 2 | 28 |
| Ջրառուների և ջրհորների | 2 | 15 | 6 | 20 |
| Հիւսն | 1 | 30 | 8 | — |
| Գոյք՝ հնձող մեքենայի նախավճար | — | — | 150 | — |
| Տնտեսական ծախքեր | — | — | 26 | 23 |
| Շինութեանց նորոգութեան | 3 | 26 | 17 | 36 |
| Ընդամէն | 224 | 2784 | 1275 | 76 |

| Ագարակի անասունները | Քանի հատ | Ծնած կամ աւելցած | Սատակած կամ մորթծ. | Մնացորդ |
|---|---|---|---|---|
| **Ձիեր** | | | | |
| Կառքի և սայլի ձիեր | 11 | — | — | 11 |
| Հեծնելու ձիեր | 10 | — | — | 10 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մատակներ | 5 | — | — | 5 |
| Քուռակ որձ 1 տ. | 1 | — | — | 1 |
| Ծնունդ 1906 թ. | — | 2 | — | 2 |
| Աւանակ | 3 | | — | 4 |
| **Տաւար** | | | | |
| Դամէշներ լծկան | 25 | — | — | 25 |
| Գոմշակով կթի և ցամաքած | 36 | — | — | 36 |
| Գոմշաձագ 1 տար. | 23 | — | — | 23 |
| » 2 » | 14 | — | — | 14 |
| Ծնունդ 1906 թ. | 4 | 5 | — | 9 |
| Եզներ լծկան | 24 | — | — | 24 |
| Կովեր | 18 | — | — | 18 |
| Ծնունդ 1906 թ. | 10 | 2 | — | 12 |
| Հորթեր 1 տար. | 16 | — | — | 16 |
| » 2 տ. | 2 | — | — | 2 |
| | 202 | 9 | | 211 |

| Կաթնատնտեսութիւն | Գ. | Փ. | Ընդամէն Գ. | Ընդամէն Փ. |
|---|---|---|---|---|
| **Մուտք** | | | | |
| 16 կովերից ստացուել է կաթ. | 48 | 5 | | |
| 15 գոմշակովերից | 70 | 25 | 118 | 30 |
| **Ելք** | | | | |
| Պատրաստուել է իւղ 3 պ. 11½ փ., որի համար գնացել է | 77 | | | |
| 23 փ. պանիր պատրաստելու | 5 | | | |
| Կաթ տրուել է վեհարանին, միաբանութեան, հիւրատան և հիւանդներին | 11 | 30 | | |
| Մածուն | 25 | — | 118 | 30 |

| Գինեգործութիւն | վեդրօ | շիշ | ընդամէն | |
|---|---|---|---|---|
| | | | վ. | շ. |
| **Մուտք** | | | | |
| Գինի մնում էր առ 1 Ապրիլի | 1715 | — | 1715 | — |
| **Ելք** | | | | |
| Բաց է թողուած | | | | |
| Միաբանութեան, հիւրատան և վեհար. | 82 | | | |
| Ծախուած է | 7 | 8 | | |
| Գլխները լցնելու | 4 | 8 | 94 | — |
| Մնում է առ 1 Մայիսի | — | — | 1621 | |

## Նկատողութիւններ

*Ապրիլ ամսին շարունակուել է այգիների փորելը, ջրատուներ հանելը, դար ու փոսերն ու ճանապարհներն ուղղելը։*

*Անտառում շարունակուել է ջրելը, շինութեանց համար փայտ պատրաստելը։*

*Երկու դուլթան շարունակ վարել են աշնանացանի համար մօտ 15 դես. տեղ։*

*Սերմել ենք իբրև փորձ գազարի, ճակնդեղի և վայրի բողկի սերմեր կթի տաւարը կերակրելու նպատակաւ։*

*Ղըի այգում ցանել ենք մօտ 1/2 դես. տեղ բամբակ։*

*Նախկին բուլվարում (որ այժմ ծառատունկ է) բանջարանոցի սերմեր։*

*Փորել ենք տուել չորս ջրհոր ջրի խորութիւնը և քանակը իմանալու, որ յարմարեցնուի ձիու կամ քամու ուժով ջուր բարձրացնելու իբրև տիպար փոքրիկ տնտեսութեան համար։*

Ապրել 23-ին սկսուել է չերամի որդի բացուելը։ Պահում ենք 29 զօլօտնիկ սերմ իտալական ճերմակ տեսակի։ Ծերամատունը պիտի ծառայէ ճեմարանի սաներին և թէ ժողովրդին գործնականապէս ծանօթացնելու այդ ճիւղի հետ։ Մուտքը ազա՛տ է ամենքի համար, ամեն օր։

Աչքի ընկնող երևոյթ—խնձորենու թրթուրը այս տարի ոչ միայն խժռել է Վաղարշապատի, այլ և շրջակայ գիւղերի խնձորենիների տերևը և այժմ անցել շլորի և այլ ծառերի վրայ։ Բժշկութեան ոչ մի միջոց չէ գործադրւում։

Ամսուայ մէջ ամենաբարձր ջերմութիւնն էր $+25^0$, միջին տաքութիւնը $+12^0$ R.

Անձրև եղել է 18-ին, 19, 21, 23, 25. քամիներ 20, 23-ին.

Գիւղ. Ն. Ն. Մելիք-Շահնազարեան